ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՇՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26.04.2019թ.

ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ ԳԱՊ գնահատման պատասխանատու

Խաչիկ Կարապետյան – Հանձնաժողովի նախագահի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ ԳԱ-գնահատող անձնակազմ

Նանե Քալաշյան - Հանձնաժողովի վերահսկողության վարչության ստուգումների բաժնի առաջատար մասնագետ,

Հայկ Սարգսյան - Հանձնաժողովի վերլուծության և մրցակցության գնահատման վարչության 2-րդ բաժնի առաջատար մասնագետ,

Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ ԲԱ-բացող անձնակազմ

Գարիկ Մկրտչյան - Հանձնաժողովի պարետ,

Թոմաս Զուլալյան – Հանձնաժողովի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող-համակարգչային ցանցի ադմինիստրատոր,

Հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ ՄՀՄ

Տիգրան Սաֆարյան – Հանձնաժողովի վերլուծության և մրցակցության գնահատման վարչության 2-րդ բաժնի առաջատար մասնագետ:

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության վերաբերյալ

(Խ. Կարապետյան)

1. Ընդունել ի գիտություն, որ՝

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ մասով՝ 22.04.2019թ.-ին հարցում էր ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի և մասնակիցների հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 2019 թվականի ապրիլի 26-ին ներկայացվել է եզրակացություն համաձայն, որի 1-ին տեղ զբաղեցրած «ԱԳԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (10.04.2019թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ամրագրված սահմանաչափը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն:

1.1 «ԱԳԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն՝ «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՇՁԲ-19/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 22.04.2019թ.-ի թիվ 2 որոշմամբ ճանաչվել էր առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

1.2 Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված դրական եզրակացությունը, առաջին տեղ զբաղեցրաց մասնակցին կառաջարկվի կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի.

Նախագահ՝ _____Խ. Կարապետյան

Անդամներ՝ _____Հ. Սարգսյան

_____Թ. Զուլալյան

_____Գ. Մկրտչյան

_____Ն. Քալաշյան

Քարտուղար՝ _____Տ. Սաֆարյան